Ժիրայր Աղավելյան. «Խորհուրդ կտամ նկարել ոչ միայն տեսնելով, այլեւ՝ զգալով»

Դրվել է in Love You | 0 մեկնաբանություն

Բոստոնաբնակ հայ ռեժիսոր Ժիրայր Աղավելյանի ֆոտոարթի ժանրում ստեղծված աշխատանքներն այս օրերին ներկայացված էին «Նարեկացի» արվեստի միության ցուցասրահում: Մեզ հետ զրույցի ընթացքում պարոն Աղավելյանը խոսեց վավերագրականի լուսանկարչականի ու կինեմատոգրաֆիստականի սահմանագծում գտնվող իր լուսանկարների մասին:

Հայաստանում այլ ցուցահանդեսներ ունեցե՞լ եք:

- Անցած տարի եմ ցուցահանդես ունեցել, իսկ մոտ մեկ ամիս առաջ ունեցել եմ նաև Թեքեյան կենտրոնում: Բոլոր ցուցահանդեսներին ներկայացրել եմ տարբեր նկարներ:

Ինչո՞վ են յուրահատուկ ձեր նկարները:

-Քանի որ մասնագիտությամբ ռեժիսոր եմ, որոշեցի շարժումը կանգնեցնել, դարձնել կայուն, ստատիկ նկար, որը կարողացա անել լուսանկարչության միջոցով: Իմ նկարները ավելի շատ նման են ֆոտոռեժիսուրայի, ֆոտոգեղարվեստի: Նկարների մեջ կարելի է տեսնել այլ նկարներ: Հենց ամբողջ իմաստն էլ դա է, որ ես եւ նկարը դիտողը ստեղծագործենք միասին, քանի որ շատ եմ կարեւորում մարդկանց եւ նկարների հոգեւոր կապը:

Ունե՞ք նախընտրած գույն, որը գերակշռում է ձեր նկարներում:

-Այն մուգ շագանակագույնն է: Լինելով մուգ գույն՝ իմ ստեղծագործություններում լույս է տալիս:

Իսկ եղե՞լ է այնպես, որ մուսան անհետանա:

-Իհարկե, այդ ժամանակ զբաղվում եմ ուրիշ գործերով՝ գրում եմ երաժշտություն, փոքրիկ բանաստեղծություններ:

Ո՞րն է եղել ձեր առաջին ցուցահանդեսը:

-Ցուցահանդես բացելու միտք հղացավ, երբ Բոստոնում գնացի մեծահասակների կենտրոն եւ նկարեցի մեծահասակներին: Բոլորը ցանկացան իրենց դիմանկարները տեսնել, եւ այդ ժամանակ միտք առաջացավ ցուցահանդես բացել:

Իսկ ձեր նկարները վաճառվու՞մ են:

-Դեռ դրա մասին չեմ մտածել, բայց եթե ցանկացողներ լինեն կվաճառեմ:

Ի՞նչ խորհուրդ կտաք երիտասարդ արվեստագետներին:

-Խորհուրդ կտամ նկարել ոչ միայն տեսնելով, այլև զգալով:

Լիլիթ Սեդրակյան

[Show as slideshow]














LoveYou.am